ներուն չը մօտեցած՝ մեզ ուղղակի բանան են առաջնորդելու. ո՞ր տեղէն պէտք է դրամ ճարենք տանք որ ազատուենք։

Միայն Օսմանլին չէ, դեռ այնտեղ կը մնան Հայ-Մուրախասի (Առաջնորդի) իշխանները, եթէ անոնց մէջէն մեր ճանչցած մէկ քանիին ալ բան մը չը տանենք, միանալով միւսներու հետ ոտքի կը հանեն հայ գիւղացիները, մեր վրայի բողոքները կը սաստկացնեն. իսկ եթէ անոնց կոկորդը լեցնենք, անանք են որ այդ դատերը փճացնել պիտի տան։

Մենք չենք կարող մտնել չուկան. վաճառականը, խանութպանը, դերձակը եւայն եւայն դրամ պիտի պահանջեն, եթէ ոչ մեզ ապրանք չեն տար. բերէք ամեն մէկդ հարիւր լիրա տուէք որ Աչիրաթի պէտքերը հոգանք։

«Ապա ի՞նչ ընենք, մենք Հայ չենք որ արուեստ ու վաճառականութիւն ունենանք, խելք բանեցնենք որ կարենանք ապրիլ. Օսմանլի չենք, որ նստենք osաները՝ ոսկին մեր ոտքը գայ. մենք Քիւրդ ենք, ոչ խելք ունինք, ոչ գիր և գրականութիւն (նվիսէմա չունինա). մեր տեղը սարերն է, մեր գործը տաւար ոչխարի հետ է։ Աչիրաթի մէջ կեաճէ (կին), կիզիկ (աղջիկ) չէ մնացեր որ կնութեան առնենք, իմ որդին, իմ եղբօրորդին նորահաս ջահէլներ են, անոնց համար սիրուն և գեղեցիկ կին պէտք է՝ ան ալ չկայ. բոլորս կորեկ, պաճեկ ուտելով կոտորուեցանք. Աչիրաթի մէջ այնպիսիներ կան որ տարիներով ցորեն հացի երես տեսած չունին. մենք երկրագործութիւն ընել չենք կրնար որ ցորեն ունենանք, հապա ի՞նչպէս հոգանք մեր պակասութիւնները. յետոյ իր հարցին ինքը պատասխանելով կը շեշտէ, աւազակութեամբ. մեր ամբողջ գիտցածը այս է։ Ամեն մէկը իւր կողմէն կը խոստովանի «ես ծառայ (աղ խոլամ), մենք ոչ մի գործ ընել չենք գիտեր, և ուրիշ միջոց ալ չունինք, այդ է». կը տիրէ խորհրդաւոր լռութիւն...

Այս տեղ մենք կուտանք հետեւանքի մօտաւոր պատկերը։

— Որ այդ է, դէ գնացէք ամեն մէկդ, հանէք ձեր մարդերը, առէք ձեր զէնքերը, հեծէք ձեր ձիերը, մինչև այս ինչ